

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
Տ. ՆԱՐԵԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՇԱՔԱՐՅԱՆԻՆ՝ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

ՎԱՂԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՂԳԻՍ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՂԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՏԻՐԱԽՆԱՄ ՇԻՐԱԿԱՅ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԵԱՅ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍՈՒՆ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ, ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՀԱՄԱՅՆ
ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՄԵՐՈՒՄ, ՈՂՋՈՅՆ
ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ի ԳԱՀԷՆ ՍՐԲՈՅ
ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ

Գոհութիւն Ամենակալին Աստուծոյ, որ Իր ամենազօր սուրբ Աջով, շէն ու անսասան է պահպանում Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցին եւ համայն ժողովուրդը հայոց, ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:

Մենք անչափ մխիթարուած ենք որ, անցեալ դարերի կործանարար արհաւիրքներից յետոյ, այսօր վերստին շէն եւ կանգուն են նաեւ պատմական Շիրակի սուրբ տաճարները, իբրեւ աղօթքի եւ ուխտի նուիրական վայրեր, իբրեւ պանծալի ճարտարապետական կոթողներ:

Սիրելիներ Մեր, այսօր Մեր սիրտը առաւել ուրախ է, որովհետեւ սոյն կոնդակաւ ձեզ բոլորիդ ի գիտութիւն յայտնում ենք որ Տիրոջ ողորմութեամբ, նշանակել ենք ձեր թեմի հաւատարիմ նոր հոգեւոր առաջնորդ յանձին Մայր Աթոռիս միաբան հոգեշնորհ տ. Նարեկ վարդապետ Շաքարյանի, որ սկսեալ սոյն ամսի հինգից ստանձնելու է թեմիդ եկեղեցիների եւ եկեղեցական համայնք-

ների հոգեւոր ղեկավարությունը, իբրեւ առաջնորդական տեղապահ, ըստ կարգաց եւ կանոնաց Հայաստանեայց եկեղեցւոյ:

Հոգեշնորհ տ. Նարեկ հայր սուրբը, իբրեւ հաւատաւոր, նուիրեալ եւ ժրաջան սպասաւոր եկեղեցու, գալիս է ձեզ մօտ ազնիւ ներշնչումներով ու աշխատանքի երիտասարդական աւիւնով, դառնալու համար ձեր եկեղեցիների արթուն լուսարարը, ձեր հոգիների խոնարհ սիփեթարիչը, ձեր կրօնական կեանքի շինարար առաջնորդը:

Հարազատներ Մեր, ընդունեցէք նրան սիրով ու բարի սպասումներով, որպէսզի միասիրտ ու միախորհուրդ, է՛լ աւելի շէնացնէք ձեր աղօթքի տաճարները, է՛լ աւելի պայծառացնէք մեր հայրերի լոյս հաւատքը ժողովրդի հոգու մէջ, է՛լ աւելի ջերմ եռանդով կենսագործէք սուրբ Աւետարանի փրկարար պատգամները ձեր համայնական ու անհատական կեանքի եւ աշխատանքի մէջ:

Թող Աստուած յաւէտ նշխարած ու անվտանգ պահի մեր լուսաբնակ նախնեաց Մայր եկեղեցին եւ համայն ժողովուրդը հայոց:

Թող Աստուած յաւէտ շէն ու պայծառ պահի վերածնած Ծիրակը համայն, իր սրբավայրերով, իր քաղաքներով ու գիւղերով եւ իր չարքաշ աշխատասէր ժողովրդով, խաղաղութեան եւ վերելքի մէջ յարատեւ:

Թող Աստուած ձեզ բոլորիդ պարգեւի կենաց երկար, արեւոտ տարիներ, ձեր եկեղեցաշէն ու առաքինի գործոց լիակատար յաջողութեամբ:

«Այլ ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս եւ Աստուած եւ Հայր մեր, որ սիրեացն զմեզ եւ ետ մեզ մխիթարութիւն յաւիտենից՝ եւ յոյս բարեաց շնորհօք, մխիթարեսցէ զսիրտս ձեր՝ եւ հաստատեսցէ յամենայն բանս եւ ի գործս բարութեան» (Բ Թես. Բ 15—16): Ամէն:

Կարեկին Բ.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 2-ը դեկտեմբերի
1971 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 717